

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԶԱՔԵԼ ԲՈՅԱԶՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Տ. Գ. ԽՈՐՇԻԿՅԱՆ

Անցյալ դարի վերջին և մեր դարի սկզբին Եվրոպայի և Ամերիկայի անդլիախոս մտավորականությունը և առհասարակ զրասեր հասարակա-  
նությունը թեև շատ բան էր լսել և կարդացել հայ ժողովրդի ահավոր դժբախ-  
տությունների մասին, այսուհանդերձ քիչ բան դիտեր հայ ժողովրդի բազ-  
մադարյան պատմության ու զրականության, արվեստի և հոգևոր մշակույթի  
վերաբերյալ: Անգլերեն լեզվով հորենացու և Եդիշերի հին ու սակավաթիվ  
թարգմանություններից քաղի, ավելի ժամանակակից հրատարակություններ  
էին համարվում Հայաստանի ու հայոց պատմության վերաբերյալ Ղ. Ալի-  
շանի 1852 թ. հայերեն և անգլերեն հրատարակված «Հայոց երգը ռամկա-  
կանը» խորագրով ժողովածուն, Լինչի հայտնի երկհատոր աշխատությունը  
և Ալիս Բլեկուելի թարգմանած «Հայ բանաստեղծություններ» ժողովածուն:  
Վերոհիշյալներից բացի կատարվում էին սակավաթիվ թարգմանություններ  
ևս, որոնք, սակայն, ամբողջական պատկերացում չէին տալիս հայ բազմա-  
դարյան պեղարվածության զրականության մասին:

Զգացվում էր առավել արժեքավոր և ամբողջական թարգմանական գոր-  
ծերը կարիքը: Ամերիկայում և Անգլիայում այդ ձևոնարկման պատիվը մեծ  
մասամբ պատկանում է Ալիս Բլեկուելին և Զաքել Բոյաջյանին, որոնք հայ  
զրականությունը անգլերեն լեզվով թարգմանելու շնորհակալ գործի սկզբնա-  
վորողները հանդիսանալով, իրենց թարգմանություններով նշանակալից ա-  
վանդ մուծեցին այդ կարևոր բնագավառում: Նրանք հայ զրականության  
անմխտելի արժանիքները միջազգային լայն ասպարեզ հանեցին:

Անգլիայում, ղեկս անցած դարի 90-ական թթ., հայ զրականության և  
մշակույթի պրոպագանդման աշխատանքները սկսվել էին լոնդոնում անգլե-  
րեն և ֆրանսերեն լեզուներով հրատարակվող «Արմենիա» քաղաքական-  
գրական թերթի էջերում: Տարիներ անց այդ շնորհակալ գործի շարունակողը  
հանդիսացավ Արշակ Տեր-Մահսեսյանը, որը հանդես եկավ առանձին թարգ-  
մանություններով անգլերեն լեզվով հրատարակվող «Արմենիա» ամսաթեր-  
թի էջերում: Սակայն միայն Զաքել Բոյաջյանին հաջողվեց առանձին ժողո-  
վածուով հանդես գալ և անգլիական մտավորականության ուշադրությունը  
հրավիրել զրաբար հայ բանահյուսության, միջնադարի հայ քնարերգության  
և իր ժամանակի արևելահայ ու արևմտահայ զրական նշանավոր երկերի  
վրա: Այդ ժողովածուն լույս տեսավ 1916 թ. վերջերին՝ «Հայկական լեզունգ-  
ներ և բանաստեղծություններ» խորագրով: Նույն այդ թվականին էր, որ  
Վ. Բրյուսովը գերազանց թարգմանություններով ռուս ընթերցողների սե-  
ղանին էր դրել իր «Поэзия Армении» մեծարժեք ժողովածուն: Բոյաջյանի

Թարգմանությունները անգլիական միջավայրում կատարեցին այն դերը, ինչ բրյուսովյան թարգմանությունները՝ ռուսական իրականության մեջ, գրական արժեքից բացի ունենալով նաև բաղադրական և հասարակական նշանակություն:

«Հայկական լեզենդներ ու բանաստեղծություններ» ժողովածուի շուրջ ստեղծված հետաքրքրության մասին զրեցին ժամանակի անգլիական շատ օրաթերթեր ու ամսագրեր, որոնք ընդարձակ գրախոսականներով բարձր գնահատեցին ժողովածուի ինչպես թարգմանական, այնպես էլ գրական-ղեկավարական սրժանիքները: «Անհնար է կարդալ ժողովածուի քնարական շքնշով ու երաժշտականությամբ հագեցված բանաստեղծությունները, — գրում էր գրախոսներից մեկը, — տոանց գիտակցելու այն, որ ընտրությունը կատարված է մի թարգմանչուհու կողմից, որը օժտված է տվյալ երկրի գրականության բնորոշ կողմերի խոր իմացությամբ: Ընդգրկված գործերը ներկայացված են այնպիսի հմտությամբ, որ նույնիսկ մի լեզվից մյուսը փոխադրված բանաստեղծություններում պահպանվել են բնագրերի յուրահատուկ ոգին ու հմայքը»<sup>1</sup>: «Չնայած Հայաստանին ճակատագրի բերմամբ բաժին է ընկել միմիայն դարավոր ճնշում ու թշվառություն, — գրում էր մի այլ գրախոս, — այնուամենայնիվ գարմանում ես, թե այդ ինչպե՞ս է, որ նրա գրականությունը հագեցված է հումորով ու պայծառատեսությամբ, կյանքի խոր հայեցողությամբ ու կենսասիրությամբ»<sup>2</sup>:

Բոյաջյանի թարգմանությունների մասին իրենց գրվածքների խոսքն ասացին նաև զաղութահայ մի շարք պարբերականներ և մշակույթի գործիչներ:

Ավետիք Իսահակյանից ժողովածուում ընդգրկված է հինգ բանաստեղծություն՝ «Սև աչերեն շատ վախեցիր», «Որսկան ախպեր, սարեն կուգաս», «Արեն իջավ սարի գլխուն», «Դուրսը բուր է խիստ» և «Դարդս լացեք, սարի սրմբու...»: Թարգմանչուհին աշխատել է հավատարիմ մնալ յուրաքանչյուր բանաստեղծության առանձնահատկություններին և հարազատորեն վերարտադրել Իսահակյանի այդ գոհարները: Այսպես, «Սև աչերեն շատ վախեցիր» գողտրիկ բանաստեղծության թարգմանության մեջ զգացվում է բնագրի շունչն ու հուղականությունը, բանաստեղծական տրամադրությունն ու քնարական թախիծը:

Սև աչերեն շատ վախեցիր,—  
էն մութ. անձեռ գիշեր է,  
Մութըն ան է. շաբլեր շատ կան,—  
Սև աչեր մի՛ սիրե:

Do not trust black eyes, but fear them:  
Gloom they are, and endless night;  
Woes and perils lurking near them —  
Love not thou their gleaming bright!

Ինչպես տեսնում ենք, թեպետև թարգմանչուհին որոշ ազատությամբ է վերարտադրել հեղինակային տողն ու խոսքի իմաստային նրբերանգները, սակայն ձգտել է պահպանել բանաստեղծության կառուցվածքն ու հանդավոր:

<sup>1</sup> Տե՛ս «Պայքար», հոր տարվա բացառիկ, Նյու-Յորք, 1958, էջ 256:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:



րումը: Հաջորդ տան մեջ պահպանված են նաև բնագրի փոթորկոտ շունչն ու «ողբերգական» քնարականությունը:

Իսահակյանի՝ խորապես սղգային լեզվամտածողությամբ և ժողովրդական խոսքի պատկերավորությամբ հագեցված պոեզիայի համեմատաբար դժվար թարգմանվող նմուշներից է «Որսկան ախպեր, սարեն կուղաս» բանաստեղծությունը: Այստեղ Բոյաջյանը նույնպես հնարավորության սահմաններում կարողացել է պահպանել հեղինակային արվեստի առանձնահատկությունները, բնագրի մթնոլորտն ու ժողովրդական խոսքի կոլորիտը.

— Որսկան ախպեր, սարեն կուղաս,  
Սարի մառալ կը փրնտրես.  
Առա, յարա՞ք դուն չը տեսար  
Իմ մառալս, իմ բալես:

Huntsman, that on the hill above  
To hunt the deer hast been,  
Tell me, I pray thee, if my love —  
My wild deer thou hast seen?

Բոյաջյանը հանդես է եկել նաև «Հայ մեծ բանաստեղծ Ավ. Իսահակյանը» խորագրով շահեկան ուսումնասիրությամբ, որտեղ դրվատել է հայ դրականության մեծ երախտավորի անմահ ստեղծագործությունների արժանիքները: Այդ գործը լույս տեսավ «Contemporary Review» հանդեսի 1925 թ. հունվարյան համարում:

Երկար տարիների ընդմիջումից հետո դարձյալ թարգմանչուհու միտքը կանգ է առնում Ավ. Իսահակյանի ստեղծագործությունների վրա, և Բոյաջյանը ձևոնարկում է Վարպետի մեծ ճանաչում գտած «Աբու-լալա Մահարի» պոեմի անգլերեն թարգմանությունը: 1948 թ., ամերիկահայ առաջնորդարանի հրատարակած հոբելյանական ժողովածուում տպագրվեց «Աբու-լալա Մահարի» պոեմի անգլերեն թարգմանությունը: Իսահակյանը, որ 1923 թ. վենետիկում հանդիպել էր Բոյաջյանին և անձնական ծանոթություն հաստատել նրա հետ, նամակով իր հիացմունքը և շնորհակալությունը հայտնեց թարգմանչուհուն: Բոյաջյանը նաև նկարագրողել էր գիրքը՝ պատկերելով անապատի միջով անցնող ուղտերի քարավանը: Թարգմանչուհին ամեն կերպ ձգտել է պահպանել բնագրի շունչը, աշխատել է չխախտել տողի ամբողջականությունը, կառուցվածքն ու հանգավորումը: Մեր ցայտուն վկայությունն են, օրինակ, երրորդ սուրահի առաջին տողերը:

Եվ քարավանը Աբու-լալայի, աղբյուրի նման մեղմ կարկաչելով,  
Հանգիստ, միալու բայլում էր առաջ հեզ լուսնկայի շողերի միջով:  
Եվ լուսինն, ինչպես չեցնեթի մատաղ փերիի կուրծքը՝ չճնաղ, լուսավառ,  
Մերք ամաչելով պահվում էր ամպում և մերք բոքոտն փայլում էր պայծառ:

And the caravan of Abu Lala to its rippling  
bells marched calmly along  
Went softly along in the moon's soft light  
to the sound of its sweet and gentle song.  
Like a beautiful Hour of Jennet,  
now heedlessly showing her soft white breast,  
Now coyly hiding in gossamer clouds,  
the moon glided over a world at rest.

Պահպանելով պոեմի դիստիկոս (երկտող) տները, թարգմանչուհին միաժամանակ աշխատել է հնարավորություն սահմաններում ճիշտ վերարտադրել հեղինակի խոհափիլիսոփայական մտքի ընթացքն ու զեղարվեստական խոսքի նրբերանգները, պատկերավոր արտահայտչամիջոցներն ու լեզվաոճական գունագեղ դարձվածքները։ Լեհա մի քանի նմուշներ.

Հնչուն զանգերի անուշ ղողանջով...

Like a gentle stream's soft murmuring song.

Եվ ղողաջներ ծոռում Բաղջալուր...

The music that streamed from their swaying bells.

Լեզվ փափկության մեջ Բաղդադն էր նիհոս ջենների շփեղ, վառ Երազներով, 'Եյուստաններում բլրույն էր Երգում զազկներն անուշ՝ սիրո արգունով:

Baghdad lay lost in voluptuous dreams of  
hours and paradise passing fair  
The nightingale warbled of love and pain in  
rose-gardens scented with perfumes rare.

Խոլ կալծակները հրեղեն սրով ծվատում էին վաշտերն ամպերի  
եվ արշավասույր՝ փշրվում էին ներմակ բաշերին ունու լեռների:

The lightning flashing in fiery haste tore up  
into shreds the mountains of cloud  
The sand in columns flew from the assault  
and the silvery hills their summits bowed.

Թարգմանության մեջ համարյա բնագրին հարադատ և համահնչյուն են մնացել պոեմի բաղմամբիվ ինքնատիպ դարձվածքներն ու թևավոր խոսքերը, օրինակ՝

Ապիբատ աշխարհ, ուր հզոր ոսկին դարձնում է գողին՝ ազնիվ, բարեհույս,  
Ապուշին՝ հանճար, վախկոտին՝ կուրին, տղեղին՝ չճաղ և պոռնիկին կույս:

Hypocritical world where Almighty gold  
will prove the villain noble and right —  
The idiot a genius, the coward brave,  
the shameless harlot an Angel of light.

Շնորհալի թարգմանչուհին համառորեն փնտրել և գտել է բնագրի պատկերավոր խոսքը ճիշտ վերարտադրող դիպուկ արտահայտություններ, իսկ երկի արևելյան կոլորիտը ընդգծելու նպատակով անդլերենում պահպանել է «քարավան», «խալիֆ», «ղուրան», «բեզվին», «ջեննեթի հուրի փերի» և նման շատ այլ բառեր:

«Լեբու-լալա Մահարի» պոեմի այս թարգմանության արժանիքների ճանաչման վկայությունն է այն իրողությունը, որ 1958 թ. Իսահակյանի և Բոյաջյանի մահվան տարեկիցի առթիվ այն վերահրատարակվեց ԼԽՄ-ում: Պոեմի այս թարգմանությունը Լորրոդ անդամ վերահրատարակվեց Իսահակյանի ծննդյան 90-ամյակին, չորրորդ անգամ՝ 95-ամյա տարեդարձի առթիվ 1970 թ.: Բառացիորեն վերջերս այն վերահրատարակվեց հինգերորդ անգամ:

ПРОИЗВЕДЕНИЯ АВЕТИКА ИСААКЯНА  
В ПЕРЕВОДАХ ЗАБЕЛ БОЯДЖЯН

Т. Г. ХОРИНДЖАН

(Резюме)

Одна из видных представительниц западноармянской интеллигенции Забел Бояджян (1873—1957) выступила не только как литературный и общественный деятель, но и как переводчик. Получив блестящее образование и владея несколькими европейскими языками, Бояджян все свои знания и талант писателя-переводчика посвятила пропаганде в европейской среде культурных ценностей, созданных армянским народом в течение многих веков.

В статье говорится о переводах Бояджян из произведений Аветика Исаакяна, в частности, об изданном ею на английском языке сборнике «Армянские легенды и стихи» (1916 г.), в котором помещены также переводы произведений Исаакяна. Перу Бояджян принадлежит и перевод известной поэмы Исаакяна «Абу-Лала Маари» (1948 г.), выдержавший пять изданий.